

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

### Կովկասի պղնձի արդիւնաբերութիւնը

Կովկասը իր լեռնային բաղմատեսակ ու բաղմաթիւ հարստութիւններով հին ժամանակից սկսած՝ դրաւել է լեռնագործների ուշադրութիւնը, և հին դարերից Կովկասի զանազան անկիւններում մշակուում էին զանազան հանքեր, որոնց մասին վրկայում են յունական, հռոմէական, հայկական պատմագիրներից մի քանիսը և Աստուածաշուէլը: Եղեկիէլի ժարգարէութիւնից երեւում է, որ Կովկասի ժողովուրդներից մի քանիսը պղնձէ ամաններ էին տանում Տիրոս՝ գերիների հետ փոխելու. (Մարգար. Եղեկիէլի, գլ. XXVII թ. 13), իսկ հայ պատմագիրներից Ղազար Փարբեցին վկայում է, որ Արարատեան դաւառում մշակւում էին պղնձի հանքեր (Ղազար Փարբեցի, թուղթ 20): Միջին դարերից սկսած, շատ քիչ հատուկտոր տեղեկութիւններ են մնացել պղնձի մշակման մասին. հայ պատմագիրներից միայն Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Զաքարէ Սպասարը մեռաւ և թաղուեց պղնձահանքում, Գետիկայ եկեղեցու դրան առաջ (Կիրակոս Գանձակեցի, երես 130, հրատար. 1850 թ.): Նոյն հանքի մասին գրում է նաև Վարդան պատմիչը: Մինչև այժմ շատ տեղերում գեռ մնացել են այդ հին մշակումների հետքերը և մնացորդները: Բայց թէ ովքեր են եղել այդ լեռնագործները, պատմութիւնը զրակսնապէս մատնացոյց չէ անում: XVIII դարից թիֆլիսի նահանգում նորից սկսուեցին մշակուել պղնձի հանքեր, և այն էլ ոչ տեղական ժողովրդի ձեռքով, այլ յոյների, որոնք հին ժամանակներից յայտնի են իբրև լաւ հանքագործներ, և որոնց գործարանների հալոյքների և մշակման հետքերը սփռուած են Անգրիովկասի զանազան անկիւններում: Յոյները մեծ մասամբ աշխատել են պղնձի հանքերի վրայ:

Պղնձի հանքերը Կովկասում բաղձաթիւ են և կարելի է ասել, որ բոլոր հանքերից ամենամեծ տեղն են բռնում: Եթէ վերջիններ 1900 թ. հրատարակուած „Вѣстникъ горнаго дѣла и орошенія“ կիսամեայ թերթը, կամ Միլլերի „Полезныя ископаемыя“ գիրքը, կը տեսնենք, որ նրանց էջերը լի են պղնձահանքերի ցուցակով, զեռ շատ պղնձահանքեր թագնուած են և մեզ անյայտ, քանի որ մեր երկիրը զեռ ուսումնասիրուած չէ՝ ինչպէս պէտք է:

Անդրկովկասում է կենտրոնացած Կովկասի այժմեան պղնձի ամբողջ արդիւնաբերութիւնը: Կովկասի պղնձի գործարանների թիւը համեմատած պղնձահանքերի թւի և հարստութեան հետ, շատ չնչին է, քանի որ Կովկասի պղինձը նաւթի և մանգանէզի հետ հաւասար կարող էր լեռնային արդիւնաբերութիւնների մէջ առաջին տեղը բռնել և պղինձ մատակարարել ոչ միայն Ռուսաստանին, այլ և Եւրոպային:

Ներկայումս չը նայելով բարձր մաքսին (3 ռ. 50 կ. պուղին)՝ իւրաքանչիւր տարի Ռուսաստան է ներմուծում Եւրոպայից մօտ մէկ միլլիոն պուղ պղինձ:

Ռուսաստանը պղնձի արդիւնաբերութեան կողմից միւս պետութիւնների շարքում այժմ բռնում է 11-րդ տեղը: Ամենամեծ պղինձ արդիւնաբերող և արտահանող պետութիւնն է Ամերիկան, որ տարեկան մշակում է 900,000 պ., իսկ Ռուսաստանը մօտ 350,000 պ.:

Ռուսաստանի պղնձի գործարանները կենտրոնացած են Ուրալում, Ալտայում, Ֆինլանդիայում, Կիրգիզեան դաշտում և Կովկասում: Կովկասը պղնձի արդիւնաբերութեան կողմից Ուրալից յետոյ Ռուսաստանում բռնում է երկրորդ տեղը:

Ներկայումս մշակուող Կովկասի պղնձահանքերից չատերը հին հանքատեղեր են, որ զանազան ժամանակներում մշակուել են, ապա թողնուել և այժմ էլ չարունակում են, ինչպէս օրինակ, Ալաւկերդու, Զանդեզուրի, Գեղարէլի պղնձի հանքերը, որոնց միջից գտնուել են հին գործիքների և մնացորդների կտորներ:

Կովկասի մշակուող պղնձի հանքերից առաջին տեղն է բռնում Գանձակի նահանգը, որտեղ կենտրոնացած են գործարանների մեծ մասը: Պղնձի արդիւնաբերութիւնով Գանձակի նահանգում առաջին տեղ են բռնում Գեղարէլի և Կալաքենդի գործարանները, իսկ հանքի հարստութեան կողմից Զանդեզուրի հանքերը:

Զանդեզուրի հանքերը գտնուում են երկաթուղու զծի Եւլախ կայարանից 220 վերստ հեռու, Արաքսի ձախ ափի կողմը: Եր-

կաթուղու գծից այդքան հեռու լինելը և քիչ թէ շատ հնարաւոր ճանապարհների բացակայութիւնը մեծ արգելքներ են հանգիստանում այս գործարանների առաջադիմութեան, այն ինչ այս հանքերը՝ լինելով առատ և հարուստ բովանդակութեամբ, կարող էին մեծ ծաւալ ստանալ, և այստեղի պղնձի արդիւնաբերութիւնը կարող էր մեծ տեղ բռնել ամբողջ Ռուսաստանի, նոյն իսկ Եւրոպայի պղնձի արդիւնաբերութեան շարքում: Եւլախ կայարանից 45 վերստ հեռաւորութիւնից սկսած մինչև Արաքս գետը բազմաթիւ տեղերում նկատուում են պղնձի հանքերի հնուց գործադրած տեղեր, որոնք այժմ մնում են առանց ուշադրութեան: Նոյն վիճակի մէջ են այժմեան գործող հանքերից դէպի հարաւ գտնուող հանքատեղերը, որոնք ճանապարհների հաղորդակցութեան դժուարութեան պատճառով մատնուած են անգործունէութեան: Զանգեզուրի բոլոր այս հանքերը ունեն համարեա միևնոյն բնաւորութիւնը և հարստութիւնը: Կովկասում և թէ Անգլիայում կատարուած հանքի վերլուծութիւնները ցոյց են տուել, որ Զանգեզուրի հանքերը պարունակում են 90% մինչև 160%—միջին թւով 130% պղինձ, իսկ մի քանի դէպ երում պղնձի տոկոսը հասնում է մինչև իսկ 250%-ի: Զանգեզուրի հանքերը իրանց մէջ պարունակում են նաև արծաթ և ոսկի: Լեռնային ինժեներ Շոստակի հաշուով Զանգեզուրի մէկ պուղ պղնձի հանքը իր մէջ պարունակում է 1 բուբլի 20 կոպէկից մինչև 2 բ. 10 կ. պղինձ, 5 կոպ. ծծումբ, 8 կոպ. արծաթ և 38 կոպ. ոսկի. միջին թւով մէկ պուղ պղնձի հանքը, եթէ նրա միջի բոլոր բաղադրութիւններից օգտուեն, կրստացուի 1 բ. 39 կոպ. լինչև 2 բ. 85 կ.: Ներկայումս այդ հանքերից ստանում են միմիայն պղինձ: 20 քառակուսի վերստի մէջ, որտեղ կենտրոնացած են Զանգեզուրի այժմեան հանքերը, հաշուելով հանքի չերտի հաստութիւնը 3 վերջոկից մինչև  $1\frac{1}{2}$  արշին, պարունակում է 500,000 խորանարդ սաժէն պղնձի հանք, որից կարելի է ստանայ 66 միլլիոն պուղ գուտ պղինձ. հանքի պուղի գինը (ոսկին, արծաթը, ծծումբը հետը) հաշուելով 2 բուբլի՝ ամբողջ 20 քառակուսի վերստի մէջ պարունակող պղնձի հանքերը արժէն մէկ միլլիարդ բուբլի, չը հաշւած այդ քսան քառ. վերստից դուրս գտնուող բազմաթիւ պղնձահանքերը: Դեռ պարսից տիրապետութեան ժամանակ այդ հանքերից մի քանիսը յայտնի էին իրանց մաքրութիւնով ու հարստութիւնով և համարոււմ էին Անդկովկասի ամենալաւ պղինձ տուողներից:

1817 թ. նորից գտնուեց Ագարակ գիւղի մօտ հինաւուրց թողած այդ պղնձահանքը: Ռուս—պարսակական պատերազմի ժամանակ այս հանքերը թողնուած էին անգործ: Երևանի առու-

միջ յետոյ 1845 թ. մաքսատան մէկ ծառայող խնդրամատոյց եղաւ գործարաններ հիմնելու: Քաւարտ և Ագարակ գիւղերի մօտ, բայց իր մօտադրութիւնը գլուխ չը բերած՝ 1848 թ. մեռաւ, և գործը մնաց կիսատ: 1850 թ. Անատոլիայից գաղթած մի յոյն Կոնդուրով անունով իր Ֆէոդոր որդու հետ իրաւունք խնդրեց, և թոյլտուութիւն ստանալով, հիմնեց գործարաններ Պերդուդում և Քաւարտում: Պղինձը մշակում էր նահապետական ձեւով և արտահանում Պարսկաստան, Թիֆլիս և չըջակայ տեղերը: 1853 թ. Պերդուդոյնի գործարանից ստացուեց 575 պուդ պղինձ, իսկ 1858 թ. Քաւարտում հիմնած գործարանից 325 պուդ: Այս գործարաններում տեղական ժողովրդից աշխատում էին միայն 4 հոգի. տեղական ժողովուրդը այս նոր աշխատանքին անսովոր լինելով մօտ չէր գալիս, ուստի Կոնդուրովը բերել տուեց Տաճկաստանից 23 յոյն վարպետներ:

Նոյն թւին Յովհաննէս Խոջամիրեանցը Ղաթարում հիմնեց մի նոր գործարան և ստացաւ 400 պուդ պղինձ. նոյն թւին Կոնդուրովը միացած ուրիշների հետ՝ Հալիձորում հիմնեց գործարան և ստացաւ առաջին տարին 500 պուդ պղինձ. գործում էր նոյն ժամանակներում նաև Ագարակի գործարանը, որ հալել էր 585 պուդ: 1858 թ. Զանգեզուրի բոլոր գործարաններում հալուած է 2485 պուդ կարմիր պղինձ: Այնուհետև տարեցտարի աւելանում է այդ թիւը. 1887 թ. հալուած է 15319 պուդ, 1898 թ. 31,246, 1900 թ. 50,000 պուդ, իսկ այժմ Զանգեզուրի գործարանների պղինձի արդիւնաբերութիւնը տարեկան հասնում է 56,000 պուդի, 1858 թ. սկսած մինչև այժմ բոլոր գործարաններում հալուած է 600,000 պուդ կարմիր պղինձ:

Մինչև վերջին ժամանակներս պղինձի հալելը կատարւում էր նահապետական՝ հին սիստեմով, հետեաբար և արդիւնքը քիչ էր: Բայց այժմ Զանգեզուրի պղինձի արդիւնաբերութիւնը մեծ յառաջադիմութիւն արաւ. Պ. Մելիք-Ագարեանցը իր գործարանը շինեց պղինձի գործարանային արդի կատարելագործուած հիմքերի վրայ. բերել տուեց Եւրոպայից նոր վարպետներ, մեքենաներ, հիմնեց կատարելագործուած պղինձ հալող նոր հնոցներ, այնպէս որ նրա գործարանը ունենալով կատարելագործուած բոլոր միջոցները, հալում է ոչ թէ միայն իր հանքերը, այլ և համարեա Զանգեզուրի բոլոր միւս պղինձ արդիւնաբերողներին, որոնք թողած իրանց հալուցքի նահապետական սիստեմը, բերում, հալում են Մելիք-Ագարեանցի գործարանում: Կատարելագործուած սիստեմի շնորհիւ առաջուայ 5-7 հազար պուդ պղինձի փոխարէն այժմ Մ.-Ագարեանցի գործարանում հալում է մօտ 42000 պուդ պղինձ:

Եթէ չինուեն կարգին հաղորդակցութեան ճանապարհներ, այն ժամանակ այդ գործարանների արդիւնաբերութիւնը կը կրկնապատկուի, քանի որ հնար կը լինի մեծ քանակութեամբ վառելանիւթ և այլ կարևոր նիւթեր հասցնել իր ժամանակին: Այժմ այդ գործարանների համար կոկար բերում է Եկատերինոսովայից երկաթուղով մինչև Եւլախ կայարանը, իսկ այստեղից ուղտերով մինչև Չանգեզուր կոկար իւրաքանչիւր պուղը նստում է մինչև 70 կոպ.:

Չանգեզուրի հանքերում աշխատում են մօտ 1500 բանուոր, բացի տեղական բանուորներից՝ նրանց մի մասը գալիս է Պարսկաստանից. բանուորների վարձը հասնում է 35—60 կոպէկի:

Ներկայումս Չանգեզուրի ամեն մի հանքատէր գործում է առանձին, առանց աչրի առաջ ունենալու միւս հանքատէրների շահերը կամ կարիքները. կապի այդ բացակայութիւնից ընդհանուր կարիքները մնում են անկատար: Այն ինչ ցանկալի էր, որ բոլոր հանքատէրերը հաւաքական ոժով հող տանելով ընդհանուր կարիքների վրայ և կազմելով համաժողովներ (сѣбзды), ինչպէս նախագործները և մանգանէզ արդիւնաբերողները, ունենային մի հաստատութիւն, որի միջոցով կարողանային չինել ճանապարհներ, կառարկելադործէին և լրացնէին բազմաթիւ կարևոր միջոցները և այս արդիւնաբերութիւնը զարգացնէին: Չանգեզուրի հանքերը գտնուելով առանձին պայմաններում, լինելով առանձնացած Կովկասի միւս հանքատեղերից, հաւաքուած են մի տեղ, միմիանց մօտ, ունեն շատ ընդհանուր կարիքներ: Այդ ընդհանուր կարիքների հարցերը լուծելու համար վաղուց զգացւում էր Չանգեզուրի հանքատէրների առանձին համաժողովներ կազմելու անհրաժեշտութիւն: Եւ երկրագործական ու պետական կալուածքների միւնիստրութիւնը Բարձրագոյն հաստատուած հրամանով 1902 թ. փետրուար 22-ից՝ թոյլատրեց Չանգեզուրի հանքատէրերին կազմել առանձին համաժողովներ, ամեն անգամ Կովկասի կառավարչապետի համաձայնութեամբ, որտեղ որ յարմար կը լինի: Այդ համաժողովներին ներկայ են լինելու բացի հանքատէրերից՝ լեռնային և երկաթուղիների վարչութիւնների ներկայացուցիչները, նահանգական տեխնիկը և միւնիստրութեան կողմից նշանակուած նախագահը: Մինչև այժմ համաժողով դեռ չէ գումարուած, ցանկալի է որ շուտով գլուխ գալ, և լուծուեն շատ կարևոր հարցեր, որոնք սպասում են ձեռներէցութեան:

Քանձակի նահանգում և թէ սոհասարակ Կովկասում պղնձի արդիւնաբերութեան կողմից ամենամեծ տեղն է բռնում

Գեղարեւիկի և Կալաքենդի պղնձի գործարանները, որոնք գտնուում են Գանձակ քաղաքի հարաւ—արեւմտեան կողմում 60 վերստ հեռաւորութեան վրայ, իսկ երկաթուղու գծի Դալլար կայարանից 42 վերստի վրայ, Գեղարեւիկ գիւղի մօտ Այս գործարանները պատկանում են Սիմեոններին:

Գեղարեւիկի հանքը յայտնի էր շատ հնուց: Երբի մի քանի դար առաջ այստեղ կատարւում էր պղնձի մշակումը, որին ապացոյց են հին մնացած գետնանցքերը, 1860 թւին յոյն հանքագործ հղբայր Ախտիւները այստեղ վերըսկսեցին հալել պղինձ: 1864 թւին այս հանքը անցաւ Սիմեոններին ձեռքը, որոնք 1867 թ. սկսեցին բանեցնել նրանց: Իսկ Կալաքենդի հանքերը և գործարանը, որ գտնուում են առաջինից ոչ հեռու, հիմնուեց 1883 թ. և սկսեց գործել 1884 թ.: Նոյն թւին այս երկու գործարանների մէջ, 29 վերստ տարածութիւնով, շինուեց նեղ գծային երկաթուղի՝ հանքատեղիները միացնելու համար: Բացի սովորական ձեով պղինձ ստանալուց՝ 1890 թ. այստեղ հիմնուեց էլեկտրոլիտիկական բաժանմունք պղինձ ստանալու և մշակելու համար: Այս երկու գործարաններից ստացուած է 1902 թւին մօտ 120,000 պուդ պղինձ:

Գործունէութեան օրից մինչև այժմ հանուած է մօտ 60 միլլիոն պ. հանք և հալուած է  $2\frac{1}{2}$  միլլիոն պ. մաքուր կարմիր պղինձ:

Բացի դրանից Կալաքենդի գործարանում պղնձից ստացւում էին ոսկի և արծաթ, բայց վերջերքս դադարեցրուած է: Հանքերից մօտ 100,000 պուդ արտահանւում է Բագու ծծմբային թթւում պատրաստելու համար, իսկ մնացածը հալւում է գործարանում պղինձ ստանալու համար: Պէտք է ասել, որ Գեղարեւիկի և Կալաքենդի հանքերը այնքան էլ հարուստ չեն. նրանց մէջ պղնձի տոկոսը հասնում է  $4\%$ — $6\%$ —ի: Առհասարակ լաւ տեխնիկական միջոցներով գինուած՝ ամենաաղքատ պղնձից անգամ մեծ արդիւնք կարելի է ստանալ:

Վերջին տարիներումս իր պղնձի արդիւնաբերութեան ծաւալը լայնացրեց նաև Կովկասի ամենահին պղնձի գործարաններից մէկը—Ալլահվերդու գործարանը, որ գտնուում է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գաւառի Լոռուայ վիճակում, Թիֆլիս—Դարս երկաթուղու գծի վրայ, Լալ—վար լեռան ստորոտում: Շատ հին ժամանակներից այս հանքը մշակուելիս է եղել Արդէն Լալ—վար թուրքերէն անունը ցոյց է տալիս, որ այնտեղ լալ կայ, այսինքն՝ հանք կայ: Այս հանքը վաղուց գրաւել էր Անատոլիայի յոյն հանքագործների ուշադրութիւնը, և 1870 թ. յոյները սկսել են աշխատել այդ հանքի վրայ: Վրաց Հերակլ թագաւորը խրախուսում է նրանց՝ ձեռնտու պայմաններ առաջարկե-

լով: Յոյները հանքը հանում և հալում էին պրիմիտիւ ձեով, ամեն ընտանիք ջուկ-ջուկ, իր համար, վճարելով հալոցքի վառարանի համար առանձին վարձ, և ստացած պղինձը արտահանում էին Թիֆլիս, բացի ոսկուց և արծաթից, որ յանձնում էին վրաց կառավարութեան: Աշխատանքի այդպիսի բաժանումը՝ իհարկէ՝ ջլատում էր նրանց ուժերը, և քիչ օգուտ էր ստացւում, բնականաբար գործը թուլանում էր:

Ձը նայելով դրան, շնորհիւ բարեյաջող պայմանների՝ յոյների թիւը օրէցօր աւելանում էր: Բայց յանկարծ Աւարիայի Օմարխանը մի աշաւանը է սկսում դէպի Լոռի և այդպիսով աւերում է գործարանը: Գործարանը վերստին սկսում է իր գործունէութիւնը և բաւականութիւն է ապրիս թէ հայ և թէ վրացի ժողովրդին: Վրաց Գէորգի թագաւորը XVIII դարի վերջերում կապալով տալիս է այս հանքը երկու հայերի տարեկան մօտ 12,000 ռուբլի ռուսական փողով: Բայց գործին անտեղեակ լինելով գործարանը դադարեցնում է իր գործունէութիւնը, այնպէս որ ռուսաց տիրապետութեան ժամանակ համարեա այդ գործարանները չէին գործում, և բազմաթիւ յոյն ընտանիքներից մնացել էր միայն 30 ընտանիք:

Երբ 1801 թւին Վրաստանը միացուեց Ռուսաստանի հետ, այդ հանքը յանձուեց ռուս պետութեան, որի մասին ռուս պետութիւնը դեռ Վրաստանը չը միացրած իր հետ՝ զբաղրութիւն էր սկսել վրաց Գէորգի թագաւորի հետ՝ յայտնի Մուսին-Պուշկինի միջոցով: 1816 թ. Բարձրագոյն հրամանով այդ հանքը կրկին յանձնուեց յոյներին այն պայմանով, որ ստացած պղինձի 10%—ը տրուի ռուսաց կառավարութեան, 20%—գործարանի մօտ գտնուած Ալլահովերդի գիւղի բնակիչներին: 1807 թ. մասնագէտ Լոգինովը ուղարկուած էր այս հանքը քննելու. նա եղբրակացրեց, որ 5 տարուց յետոյ հանքը կը հասնի, այն ինչ ինչպէս երևում է, ոչ թէ հատնում է, այլ քանի խորն են գնում, այնքան հաստանում է: Նոյն հանքի մօտ, 1817 թ. գտան Շամլուղի պղնձահանքը: Այս երկու հանքերը մինչև 1855 թ. մշակւում էին անկանոն ձեով: Նոր տարում հանքատէրերը կազմեցին մի ընկերութիւն, որ իր գոյութիւնը պահեց մինչև 1887 թիւը: Այդ թիւից նրանք իրանց իրաւունքը յանձնեցին Իզվեկով անունով մէկին, իսկ սա էլ իր կողմից յանձնեց ֆրանսիական «Ախաուլա» ակցիոներական ընկերութեան, բայց սա էլ չը կարողանալով գործը տանել, մի շարք սխալներից յետոյ իր իրաւունքը յանձնեց ուրիշ մի ֆրանսիական ընկերութեան: Մինչև ֆրանսիացիների ձեռքը անցնելը, տեխնիկայի բացակայութեան պատճառով, գործը տարւում էր նահապետական ձեով: Ֆրանսիացիներ-

րի գալով ամեն ինչ փոխուեց, և այժմ Ալլահվերդին Փրանսիական մի գեղեցիկ կոլոնիա է ներկայացնում իր գործարանով, որտեղ ամեն ինչ բարեփոխուած է, 1902 թ. հանուած է 1,532,490 պ. հանք և հալուած է 57,053 պ. Այս գործարանը, ունենալով հանքի մեծ պաշար, և կատարելագործուած միջոցներ, Կովկասի պղնձի գործարանների շարքում արդիւնաբերութեան կողմից բռնուած է երկրորդ տեղը, թէև սրա հանքը այնքան էլ հարուստ չէ. պղնձի տոկոսը հանքի մէջ հասնում է 3%—6%:

Բացի վերոյիշեալ պղնձի գործարաններից՝ Բաթումի չրջանի, Էրզրնա կոչուած տեղում գործում է Ռիխների պղնձի գործարանը, որ իր հանքը ստանում է Ճորոխի հարաւային հոսանքի, ուստաց և տաճկաց սահմանագլխի մօտ գտնուած Խոդ-Ուլիայի պղնձահանքից: Այս գործարանը նոր է, և նրա տարեկան արդիւնաբերութիւնը դեռ փոքր է: 1897 թ. հալել է այդ գործարանը 4505 պուդ պղինձ, 1900 թ. 7891 պուդ, իսկ 1902 թ.ին 6391 պուդ:

Փոփոխակի գործել և դադարել են երկու գործարաններ, մէկը՝ որ գտնուում է, Ալեքսանդրոպոլի գաւառի և Լոռուայ վիճակի մէջ տեղը, Դերեգ-Հայի աջ կողմը, և միւսը Ղազախի գաւառի Դիլիջանի մօտ: Շուտով իր գործունէութիւնը վերսկսելու է առաջին գործարանը: Այժմ Կովկասի զանազան տեղերում կատարում են նոր պղնձահանքերի պեղումներ: Քուլթայի նահանգի Արդուինի չրջանում այժմ Չանսուլ կոչուած գիւղի մօտ աշխատում է „Кавказское мѣдоплавильное общество“-ն, որը իր գործունէութիւնը հէնց սկզբից զրել է լաւ հիւքերի վրայ. արդէն Ճորոխից սկսած մինչև հանքատեղը անց է կացրել կիրճերի միջից գեղեցիկ ճանապարհներ, շինում է գործարանը և չուտով կը սկսի իր գործունէութիւնը: Պեղումներ են կատարում նոյն չրջանում Պարսեր գիւղի մօտ՝ Մուրվանի ձորում, Խոդ գիւղի մօտ՝ Բեկկանի ձորում, Գեղրեհտի գիւղի մօտ՝ Ղազախի գաւառում, և Թիֆլիսի նահանգում—Շահալի գիւղից 20 վերստի վրայ Դերեգ-Հայի աջ կողմում: Բացի վերոյիշեալ պղնձի գործարաններից Կովկասում չը կան ուրիշ գործարաններ: Ամբողջ Կովկասում 1902 թ. հանուած է 6,641,292 պուդ հանք, հալուած է միայն 213,274 պուդ պղինձ: Մնացած բազմաթիւ պղնձահանքերը դեռ ևս մնում են անձեռնմխելի:

ՅՈՎ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ